Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1467 - Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ԷՔՍՊՈ ՄԻԼԱՆ-2015» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	**Միջոցառում**	**Աշխատանքների նկարագիր**	**Նախատես-վող ժամկետը**	**Պատասխանատու կատարողը**
		1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ		
1.	Մասնակցության պայմանագրի կնքում կազմակերպիչների հետ	ՀՀ կառավարության որոշման համաձայն մասնակցության պայմանագիրը կկնքվի կազմակերպիչների հետ:	2014թ. 4-րդ եռամսյակ – 2015թ. 1-ին եռամսյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
2.	Ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից արտոնագրված ընկերության կամ ընկերությունների ընտրություն	Հայկական տաղավարի ինժեներական նախագծման և շինարարական աշխատանքների, ինչպես նաև ներքին հարդարանքի և բացօթյա տարածքի կառուցապատման աշխատանքների իրականացման համար պետք է իրականացվի համապատասխան ընկերության կամ ընկերությունների ընտրություն, որոնք կիրականացնեն աշխատանքները կազմակերպիչների պահանջներին համապատասխան:	2014թ. 4-րդ եռամսյակ – 2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

3.	Տաղավարի վարձակալություն	Կազմակերպիչների հետ կնքված մասնակցության պայմանագրի հիման վրա կվարձակալվի հայկական տաղավարը 125 քմ մակերեսով:	2015թ. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
4.	Հայաստանի տաղավարի գլխավոր ֆունկցիոնալ բաղադրիչների մշակման և նախագծման կազմակերպման ծառայություններ	Կնախագծվեն և կմշակվեն ՀՀ տաղավարի գլխավոր ֆունկցիոնալ բաղադրիչները:	2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
5.	Տաղավարի ճարտարապետական նախագծում և դիզայներական ձևավորման նախագծում	Կնախագծվի ՀՀ տաղավարը, կկատարվեն դիզայներական մշակումները, կհաստատվի էքսպոզիցիան, տաղավարը կներկայացվի 3D անիմացիայի միջոցով: Ընտրված ճարտարապետական ընկերության կողմից կպատրաստվի նախագծի կառուցապատման և ձևավորման պլանը, որը կթարգմանվի իտալերեն:	2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
6.	Երկրորդ հարկի կառուցապատում (125 քմ)	Կիրականացվի ՀՀ տաղավարի 2-րդ հարկի կառուցապատման աշխատանքներ, որը հիմնականում ծառայելու է որպես պահեստ, գրասենյակային տարածք և օգտագործվելու է այլ նպատակներով:	2015թ. 1-ին և 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

7.	Ներքին հարդարանք և դեկորացիաներ (պատեր, առաստաղ, հատակ և այլն)	Ընտրված շինարարական ընկերության կողմից կիրականացվեն տաղավարի շինարարական, ներքին հարդարման և դեկորացիաների տեղադրման աշխատանքները:	2015թ. 1-ին և 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
8.	Տաղավարի նախագծի համապատասխանության ապահովում արտոնագրված իտալական կազմակերպության կողմից	Արտոնագրված իտալական կազմակերպության կողմից կիրականացվի ՀՀ տաղավարի նախագծի ուսումնասիրություն և համապատասխանության արտոնագրի տրամադրում:	2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
9.	Կոմերցիոն մասի ապահովման հետ կապված ծառայություններ	ա) Կոմերցիոն գործունեություն իրականացնելու համար Իտալիայում ընկերության գրանցում, համապատասխան աշխատակազմի վարձում: բ) Կոմերցիոն հատվածում գործունեություն ծավալելու համար ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից համապատասխան արտոնագրերի ստացում: գ) ՀՀ–ում կընտրվեն ցուցահանդեսում ներկայացվող ապրանքատեսակները, ընտրված ապրանքատեսակները ՀՀ մաքսային սահմանին մաքսային	2014թ. 4-րդ եռամսյակ 2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

		ձևակերպումներ ստանալուց հետո կառաքվեն ցուցահադես, որտեղ կիրականացվեն համապատասխան մաքսային ձևակերպումներ և ստուգումներ:		
10.	Մշակութային միջոցառումների ցանկի մշակում և ներկայացում կազմակերպիչների հաստատմանը	Կմշակվեն բոլոր նախատեսվող միջոցառումների ցանկն ու բովանդակությունները, կներկայացվեն կազմակեպիչների հաստատմանը, կիրականացվեն միջոցառումների անցկացման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունները:	2014թ. 4-րդ եռամսյակ – 2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ), ՀՀ մշակույթի նախարարություն
11.	Ազգային օրվա հայտի ներկայացում կազմակերպիչներին	Ցուցահանդեսի ընթացքում Հայաստանի ազգային օրվա անցկացման համար կազմակերպիչներին անհրաժեշտ է ներկայացնել հայտ, որի մեջ կնշվի նախընտրելի ժամկետը:	2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
12.	Տաղավարի նախապատրաստման նպատակով աշխատակիցների գործուղման համար անհրաժեշտ միջոցների ապահովման, մուտքի արտոնագրերի տրամադրման հետ	Տաղավարի նախապատրաստական աշխատանքների իրականացման, վերահսկման և ընդունման համար ԶՀԳ-ի պատասխանատու աշխատակիցների գործուղում ցուցահանդեսի նախապատրաստական փուլում: Ցուցահանդեսից բացումից առաջ ինքնաթիռի տոմսեր էկոնոմ դասով (8 տոմս, 1 տոմսի արժեքը՝	2014թ. 4-րդ եռամսյակ 2015թ. 1-ին 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ), ՀՀ արտաքին գործերի նախարարություն

	կապված ծախսեր և ծառայություններ	328.9 հազ. ՀՀ դրամ), Ցուցահանդեսի բացումից առաջ միջինը 10 օրով 8 անձի գործուղում Միլան «Էքսպո 2015» ցուցահանդեսի մասնակիցների հանդիպման և նախապատրաստական աշխատանքների կառավարման համար օրապահիկի ապահովում (1 օր օրապահիկ՝ 62 եվրո մոտ 34.0 հազ. ՀՀ դրամ), Ցուցահանդեսի բացումից առաջ միջինը 10 օրով 8 անձի գործուղում Միլան «Էքսպո 2015» ցուցահանդեսի մասնակիցների հանդիպման և նախապատրաստական աշխատանքների կառավարման համար մուտքի արտոնագրերի ապահովում (1 մուտքի արտոնագիր 35 եվրո մոտ 19.2 հազ. ՀՀ դրամ):		
13.	ՀՀ տաղավարի կահույքի և սարքավորումների վարձակալման կամ ձեռք բերման ծախսեր	Տաղավարի ցուցանմուշների և դեկորացիաների պատվիրում և ձեռքբերում: Ցուցափեղկերի, աուդիովիդեո սարքավորումների վարձակալում, ձեռքբերում և տեղադրում՝ ներառյալ դինամիկ եռաչափ պատկերների ստացման համար սարքվորումներ, պրոյեկտորներ, էկրաններ, ինչպես նաև գրասենյակային նյութերի ձեռքբերում, կահույքի ձեռքբերում և տեղադրում:	2015թ. 1-ին, 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

14.	Ցուցանմուշների և այլ անհրաժեշտ պարագաների ցուցահանդես տեղափոխման ծառայություններ	Ձեռքբերված նյութերը և դեկորացիաները կհավաքագրվեն, կփաթեթավորվեն կարտահանվեն Իտալիա, որտեղ համապատասխան մաքսային ձևակերպումների, կարանտին ծառայության ստուգումների ավարտից հետո կպահեստավորվեն ցուցահանդեսի տարածքում: Տրանսպորտային ծառայությունների կազմակերպում. Բեռների առաքում Միլան, Իտալիա և ցուցահանդեսի ավարտից հետո ցուցանմուշների և այլ անհրաժեշտ պարագաների առաքում Հայաստան (2 կոնտեյներ 40 ֆութ չափսի), Տրանսպորտային ծառայությունների կազմակերպում. Բեռների առաքում Միլան, Իտալիա (ավիափոխադրումներ 2500 կգ միջինը), Փոստային ծառայությունների կազմակերպում, Իտալիա տեղափոխված ցուցանմուշների և այլ անհրաժեշտ պարագաների ներքին տեղափոխում, մաքսազերծում և պահեստավորում:	2015թ. 1-ին, 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
15.	Տաղավարի ֆունկցիոնալ շահագործման ապահովման նպատակով տրանսպորտային ծառայություններ	Մեքենայի վարձակալություն և շահագործման հետ կապված ծախսեր, անձնակազմի տրանսպորտային ծախսեր:	2015թ. ընթացքում	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

16.	Մուլտիմեդիա ծրագրերի պատվիրում	Մուլտիմեդիայի ծրագրի մշակման նպատակով համապատասխան ընկերության ընտրություն և աշխատանքների պատվիրում: Ցուցահանդեսի ինտերնետային կայքի, աջակցող տեսա և աուդիո նյութերի, ինտերակտիվ բաղկացուցչի, բովանդակության պատրաստման աշխատանքների կազմակերպում և իրականացում, Ինտերնետ կայքի սպասարկումը և մոդերացիան ապահովող ծառայություններ:	2014թ. 4-րդ եռամսյակ – 2015թ. 1-ին եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
17.	Ցուցահանդեսի գովազդային նյութերի պատրաստման և ձեռքբերման ծառայությունների ապահովում	Հայաստանյան մասնակցության խորհրդանիշի դիզայն: Թռուցիկների, թղթապանակների, հրավիրատոմսերի, բաներների, բրոշյուրների և այլ աջակցող տպագրական նյութերի պատրաստման հետ կապված ծառայություններ, ընդհանուր ցուցահանդեսային պարագաների, ալբոմների նյութերի հավաքագրում: Տեղեկատվական վահանակների, սլայդների, լուսանկարների, ցուցափեղկերի տեքստերի, գովազդի պատրաստում և հասարակությանն իրազեկում, տաղավարի ընդհանուր կատալոգի տպագրություն, Քարե, մետաղյա, կերամիկական, փայտյա և այլ հուշանվերների պատրաստման հետ կապված	2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

		ծառայությունների տրամադրում, Աջակցող նյութերի և հուշանվերների արտադրություն և պատրաստում, որոնք կօգտագործվեն Իտալիայում և ազգային օրվա հասարակայնության հետ կապերում:		
18.	Գույքի և անձնակազմի ապահովագրություն	Ցուցահանդեսի անցկացման ժամանակահատվածում աշխատակազմը և ցուցադրվելիք գույքն ապահովագրվելու են կազմակերպիչների կողմից արտոնագրված ընկերության կողմից:	2015թ. 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
2. “ԷՔՍՊՈ ՄԻԼԱՆ-2015” ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ				
19.	Տաղավարի պատասխանատուների, սպասարկող անձնակազմի ցուցահանդես գործուղման ծախսերի ապահովման հետ կապված ծառայություններ	Ցուցահանդեսի ընթացքում ՁՀԳ աշխատակիցների կողմից կիրականացվեն տաղավարի, կոմերցիոն հատվածի և բացօթյա վաճառակետի համակարգման աշխատանքներ, բոլոր կատարվելիք աշխատանքների վերահսկողություն և այլն: Ցուցահանդեսի ընթացքում ինքնաթիռի տոմսեր էկոնոմ դասով (12 տոմս, 1 տոմսի արժեքը՝ 328.9 հազ. ՀՀ դրամ), Տաղավարի պատասխանատուների օրապահիկ՝ 810 օրվա կտրվածքով (հերթափոխով յուրաքնչյուր ամիս 3 մարդ *3անգամ*2 ամիս*30 օր, 1 մարդ *8 ամիս*30 օր, 1մարդ*1ամիս*30օր, 1 օր օրապահիկ՝ 62 եվրո մոտ 34.0 հազ. ՀՀ	2015թ. Մայիս-հոկտեմբեր	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

		դրամ), Մուտքի արտոնագրեր (12 մուտքի արտոնագիր (1 մուտքի արտոնագիր 35 եվրո մոտ 19.2 հազ. ՀՀ դրամ), Բնակարանների վարձակալություն Էքսպո բնակավայրում սպասարկող անձնակազմի համար (1 բնակարանը՝ 9 ամսով, 2 բնակարանը՝ 6 ամսով)		
20.	Ընթացիկ աշխատանքներ	Սանմաքրման, էլեկտրոէներգիայի, հեռահաղորդակցության միջոցների և այլ ծառայությունների ծախս (ջուր, էլեկտրոէներգիա, գազ, ներքին զանգերով սահմանափակված հեռահաղորդակցության ծառայություն և տաղավարի սանմաքրման աշխատանքներ), Տաղավարի պահպանման, շահագործման հետ կապված ծառայությունների տրամադրում, Գործունեությանը աջակցող աշխատակազմ, որը կմատուցի ուղեկցողի, անվտանգության, թարգմանչության, վաճառքի, հաշվապահական հաշվառման, սննդի կետի սպասարկման և այլ ծառայություններ, ինչպես նաև տաղավարի աշխատանքների ղեկավարման համար տնօրեն 7 ամսվա համար. աշխատողների քանակը -25 հոգի 2 հերթափոխի համար	2015թ. Մայիս-հոկտեմբեր	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
21.	Ցուցահանդեսի բացման ժամանակ և Հայաստանի ազգային օրվա և այլ	Ցուցահանդեսի ընթացքում նախատեսվում է անցկացնել Հայաստանի ազգային օրը և այլ	2015թ. Մայիս-հոկտեմբեր	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ

	մշակութային միջոցառումների անցկացումը ապահովող ծառայություններ	միջոցառումներ: Միջոցառումների մասնակիցների համար (պաշտոնական պատվիրակություններ և ստեղծագործական համույթներ) համար կիրականացվի մուտքի արտոնագրերի ստացում, հյուրանոցների ամրագրում և այլ անհրաժեշտ աշխատանքներ: ՀՀ պաշտոնական պատվիրակության այցի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել պաշտոնական ընդունելություն և ընթրիք: Ցուցահանդեսի բացման, Ազգային օրվա և այլ մշակութային միջոցառումների ժամանակ (ընդամենը 4 միջոցառում) ՀՀ-ից աշխատանքային խմբի միջինը 8 օրվա համար (3 մարդ) օրապահիկի ապահովում (1 օր օրապահիկ՝ 62 եվրո մոտ 34.0 հազ. ՀՀ դրամ), Ցուցահանդեսի բացման, Ազգային օրվա և այլ մշակութային միջոցառումների ժամանակ (ընդամենը 4 միջոցառում) ՀՀ-ից աշխատանքային խմբի միջինը 7 օրվա համար (3 մարդ) գիշերավարձի ապահովում, հյուրանոցային ծառայություններ (1 օրվա գիշերավարձ՝ 70 եվրո մոտ 38.4 հազ. ՀՀ դրամ), Աշխատանքային խմբի ինքնաթիռի տոմսեր էկոնոմ դասով (12 տոմս, 1 տոմսի արժեքը՝ 328.9 հազ. ՀՀ դրամ), Մուտքի արտոնագրեր 12 մուտքի արտոնագիր (1 մուտքի արտոնագիր 35 եվրո մոտ 19.2 հազ. ՀՀ դրամ),		(համաձայնությամբ), ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն

		Ցուցահանդեսի բացման և Հայաստանի ազգային օրվա անցկացման հետ կապված այլ ծախսերի ապահովում, Ազգային օրվա ընդունելության (բանկետ) (150 անձի համար հյուրասիրություն յուրաքանչյուրի համար առավելագույնը 50 եվրո մոտ 27.4 հազ. դրամ) ապահովում, Ազգային օրվա մշակութային ծրագրի իրականացում, Այլ միջոցառումների ծրագրի իրականացում		
3. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
22.	Ցուցահանդեսի ավարտից հետո տաղավարի ապամոնտաժում	Ընտրված ընկերության կողմից կիրականացվի տաղավարի ապամոնտաժում, գույքի փաթեթավորում, մաքսային ձևակերպումներ և տեղափոխում Հայաստանի Հանրապետություն	2015թ. Հոկտեմբեր-նոյեմբեր	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
23.	ՀՀ մասնակցության ազգային օպերատորի և ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից համապատասխան փաստաթղթերի ստորագրում, ցուցահանդեսի փակում	Կիրականացվեն ցուցահանդեսի կատարողական ակտերի ստորագրման գործընթացներ, ցուցահանդեսի փակում:	2015թ. 4-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

4. ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
24.	Չնախատեսված միջոցառումներ		2014-2015թթ. ընթացքում	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ